# 693 Տառապանքով լի և մեղքերով լի՝

1. Տառապանքով լի և մեղքերով լի՝
Քեզ եմ ես գալիս, ո՛վ իմ Տեր, ողորմի՛ր:
Ընդունի՛ր հոգիս, ի՛մ Տեր,
Ամոքի՛ր հոգիս, ի՛մ Տեր,
Բժշկի՛ր հոգիս, ի՛մ Տեր, սիրելի՛ս:
- Կընդունեմ (2), միայն թե արի,
Կընդունեմ, սիրելի՛ս,
Սպասում եմ, արի՛:
Կընդունեմ հոգիդ, որդի՛ս,
Կամոքեմ հոգիդ, որդի՛ս,
Կբուժեմ հոգիդ, որդի՛ս,
Միայն թե արի՛:

2. Մարդկանցից ծեծված, անհույս, մոլորված՝
Քեզ եմ ես գալիս, ո՛վ իմ Տեր ողորմած:
Ընդունիր հոգիս ով իմ Տեր,
Ամոքիր հոգիս իմ Տեր,
Բժշկիր հոգիս ով իմ Տեր՝ սիրելիս:
- Կընդունեմ (2), միայն թե արի,
Կընդունեմ, սիրելի՛ս, սպասում եմ, արի՛:
Կընդունեմ (2), միայն թե արի՛,
Կընդունեմ, որդի՛ս, կանչում եմ, արի՛:
Պատմուճան հագցրե՛ք իմ որդուն,
Մատանին դրե՛ք մատին,
Կոշիկներ հագցրե՛ք ոտքին
Կորած որդուս:
Կորած էր որդիս, գտնվեցավ,
Մեռած էր որդիս, կենդանացավ:
Կընդունեմ հոգիդ, որդի՛ս,
Կամոքեմ հոգիդ, որդի՛ս,
Կբուժեմ հոգիդ, որդի՛ս,
Միայն թե արի: